ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԴՏՊ – Ծ1011.Մ11008/25

ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԴՐԱՄԱՇՆՈՐՀԻ ՁԵՎՈՎ «ՀԱՆՐԱԿԱՑԱՐԱՆՆԵՐ» ՊՈԱԿ-ԻՆ ՏՐԱՄԱԴՐՎՈՂ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ՄԱՍԻՆ

ք. Երևան «10» «սեպտեմբերի» 2025 թ.

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի դեմս գլխավոր քարտուղար Ս. Մուրադյանի (այսուհետ՝ Նախարարություն), որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, մի կողմից, և «Հանրակացարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը, ի դեմս կազմակերպության տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար՝ Ա.Ալեքսանյանի (այսուհետ՝ Կազմակերպություն), որը գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա, մյուս կողմից (այսուհետ՝ միասին՝ կողմեր), ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշման N 5 հավելվածի 7-րդ աղյուսակի 1011 «Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն» ծրագրի 11008 «Ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների կենցաղային խնդիրների լուծման միջոցառումների իրականացում» միջոցառման իրականացման նպատակով կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր)՝ հետևյալի մասին.

1. Պայմանագրի առարկան

1.1. Սույն պայմանագրով Նախարարությունը պարտավորվում է Կազմակերպությանը հատկացնել ՀՀ 2025 թվականի պետական բյուջեով նախատեսված չափաքանակից՝ 33,858,700 (երեսուներեք միլիոն ութ հարյուր հիսունութ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ, իսկ Կազմակերպությունը՝ պարտավորվում է իրականացնել 1.2-րդ կետով նախատեսված փախստականներով և ոչ փախստականներով (տեղաբնակ) բնակեցված կացարաններում սպասարկման աշխատանքների իրականացումը՝ սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող N 1 հավելվածով նախատեսված Միջոցառումներին (այսուհետ՝ Միջոցառումներ) համապատասխան, N 2 հավելվածով սահմանված ֆինանսական ցուցանիշների, բարեգործական և այլ միջոցների շրջանակներում:

1.2. Սույն պայմանագրով Կազմակերպությունը պարտավորվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում Երևան քաղաքի Մոլդովական փողոց 29/1 և Շիրակի փող. 2/32, Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Ուսանողական փողոց 4 ճարտարագիտական քոլեջի հանրակացարանի և Արարատի մարզի Դարբնիկ գյուղի Անդրանիկի 4, նախկին գյուղատնտեսական քոլեջ հանրակացարանային մասնաշենքերում կատարել հետևյալ աշխատանքները՝

1.2.1. հանրակացարաններում բնակվող փախստական և ոչ փախստական (տեղաբնակ) ընտանիքների և բնակիչների հաշվառում.

1.2.2. հանրակացարանային մասնաշենքերում ընդհանուր օգտագործման տարածքների պահպանում.

1.2.3. հանրակացարանային մասնաշենքերում էլեկտրասնուցման ապահովում.

1.2.4. հանրակացարանային մասնաշենքերում կոմունալ սպասարկման ծառայությունների ժամանակին կատարման հսկողություն.

1.2.5.հանրակացարանային մասնաշենքերում սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման հսկողություն.

1.2.6. հանրակացարանային մասնաշենքերում ջրամատակարարման և ջրահեռացման /կոյուղի/ համակարգի անխափան գործունեության կազմակերպում.

1.2.7 հանրակացարանային մասնաշենքերում ներքին կարգ ու կանոնի ապահովում.

1.2.8 բնակիչներին անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկանքների տրամադրում.

1.2.9. հանրակացարանային մասնաշենքերում ազատ սենյակների առկայության վերաբերյալ գրավոր տեղեկատվության ներկայացնում լիազորված պետական մարմնին՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն.

1.2.10.հանրակացարանային մասնաշենքերում երկար ժամանակ չբնակվող կամ անօրինական զբաղեցրած սենյակներն ազատելու նպատակով դատարան համապատասխան հայցադիմումի ներկայացում և այդ մասին Հայաստանի Հանրապետության աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն տեղեկացում.

1.2.11. անհրաժեշտության դեպքում իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպությունների և ֆիզիկական անձանց, ինչպես նաև տեղաբնակ ու իրենց բնակմակերեսները սեփականաշնորհած փախստական ընտանիքների հետ պայմանագրերի կնքում.

1.2.12. օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթների իրականացում:

2. Կողմերի իրավունքները և պարտավորությունները

2.1. Նախարարությունն իրավունք ունի՝

2.1.1. ցանկացած ժամանակ ստուգել Կազմակերպության կողմից իրականացվող Միջոցառումների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի բնականոն գործունեությանը.

2.1.2. սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Միջոցառումների պահանջներին չհամապատասխանելու դեպքում չընդունել իրականացված Միջոցառումները՝ իր հայեցողությամբ սահմանելով թերությունների անհատույց վերացման ողջամիտ ժամկետ, և Կազմակերպությունից պահանջել վճարել սույն պայմանագրի 6.1 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3. առանց իրականացված Միջոցառումների արդյունքների դիմաց գումար տրամադրելու՝ միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել պատճառված վնասները, եթե՝

ա. Կազմակերպությունը ժամանակին չի սկսում իրականացվող Միջոցառումները, կամ դրա իրականացման ժամանակ ակնհայտ է դառնում, որ այն պատշաճ չի իրականացվելու,

բ. իրականացված Միջոցառումները չեն համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Միջոցառումների պահանջներին.

2.1.4. սույն պայմանագիրն օրենքով կամ սույն պայմանագրով նախատեսված հիմքերով լուծելու դեպքում պահանջելու իրեն հանձնել անավարտ Միջոցառումների արդյունքները:

2.2. Կազմակերպությունն իրավունք ունի՝

2.2.1. իրականացված Միջոցառումների արդյունքը Նախարարության կողմից ընդունվելու դեպքում պահանջել վճարելու իրեն հասանելիք գումարը.

2.2.2. Նախարարության կողմից գումարները չվճարելու դեպքում միակողմանի լուծել սույն պայմանագիրը և պահանջել հատուցել իրեն պատճառված վնասները:

2.3. Նախարարությունը պարտավոր է՝

2.3.1. սույն պայմանագրով և այլ իրավական ակտերով նախատեսված դեպքերում աջակցել Կազմակերպությանը.

2.3.2. անհրաժեշտությամբ պայմանավորված կատարել առանձին Միջոցառումների իրականացման մոնիթորինգ՝ անհրաժեշտության դեպքում համագործակցելով այլ պետական կառավարման մարմինների հետ.

2.3.3. սույն պայմանագրի N 1 հավելվածի ձևաչափով նախատեսած միջոցառումների իրականացման մասին ներկայացված կատարողական ամսական հաշվետվության վերաբերյալ համապատասխան որոշում ընդունել (դրական/բացասական եզրակացություն) պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետում: Եթե ներկայացված հաշվետվությունների համաձայն իրականացված միջոցառումը համապատասխանում է սույն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսած միջոցառումների և սույն պայմանագրի պահանջներին, ապա դրանք ընդունվում են, որի համար տրվում է եզրակացություն՝ համաձայն N 5 հավելվածի:

2.4. Կազմակերպությունը պարտավոր է՝

2.4.1. սույն պայմանագրով Նախարարության կողմից տրամադրված գումարների հաշվառումն իրականացնել՝ հաշվապահական հաշվառման մասին ՀՀ օրենսդրությամբ նախատեսված N 20 ստանդարտի դրույթներին համապատասխան.

2.4.2. Միջոցառումների իրականացման նպատակով ֆինանսական միջոցներն օգտագործել սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված ֆինանսական ցուցանիշներին համապատասխան.

2.4.3. կատարել Նախարարության կողմից բացահայտված թերությունների վերացման նպատակով տրված ցուցումները.

2.4.4. Նախարարությանը ներկայացնել հաշվետու ժամանակահատվածում փոխհատուցման ենթակա ֆինանսական միջոցների վերաբերյալ ՀՀ ֆինանսների նախարարի 2007 թվականի հունվարի 9-ի N 5 հրամանով սահմանված տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշվառմամբ հաշվետվությունը՝ համաձայն սույն պայմանագրի N 3 հավելվածի.

2.4.5. Նախարարությանը ներկայացնել ՀՀ ֆինանսների նախարարի 2013 թվականի փետրվարի 4-ի N 104 հրամանով սահմանված կարգով և ժամկետներում Կազմակերպության ֆինանսատնտեսական գործունեության վերաբերյալ հաշվետվությունները.

2.4.6. Սույն Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո 10 օրյա ժամկետում Գլխավոր ֆինանսիստի հաստատմանը ներկայացնել ֆինանսատնտեսական գործունեության նախահաշիվը: Ֆինանսատնտեսական գործունեության արդյունքներով պայմանավորված՝ համապատասխան հիմնավորումների հետ միասին, Նախահաշվի յուրաքանչյուր փոփոխություն ներկայացնել Գլխավոր ֆինանսիստի համաձայնեցմանը, այնուհետև՝ հաստատմանը:

2.4.7. 2025 թվականի ֆինանսատնտեսական գործունեության նախահաշվով նախատեսված միջոցների շրջանակներում անհրաժեշտ ապրանքները, աշխատանքները և ծառայությունները ձեռք բերել գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված ընթացակարգերով"

2.4.8. սույն պայմանագրի գործողության ընթացքում ապահովել Միջոցառման իրականացմանը վերաբերվող փաստաթղթերին ծանոթանալու Նախարարության հնարավորությունը՝ վերջինիս կողմից գրավոր պահանջ ստանալու օրվանից 5 աշխատանքային օրվա ընթացքում.

2.4.9. Նախարարության կողմից առանձին միջոցառումների իրականացման մասին հաշվետվությունները չընդունելու դեպքում, Նախարարության կողմից սահմանված ողջամիտ ժամկետում վերացնել արձանագրված անհամապատասխանությունները:

3. Մոնիթորինգը

3.1. Նախարարությանը միջոցառման իրականացման նախնական, ընթացիկ և վերջնական արդյունքների համապատասխանության գնահատման նպատակով կարող է իրականացնել մոնիթորինգ.

3.2. Մոնիթորինգն իրականացվում է Նախարարության կամ նրա կողմից լիազորված կազմակերպության կամ անձի կողմից.

3.3. Մոնիթորինգի իրականացման ընթացքում բացահայտված թերացումների ու բացթողումների շտկման նպատակով Կազմակերպությանը տրվում են ցուցումներ և առաջարկություններ.

3.4. Նախարարությունը ցանկացած ժամանակ կարող է Միջոցառման շրջանակներում իրականացնել մոնիթորինգ՝ ուսումնասիրելով Միջոցառմանն առնչվող ցանկացած փաստաթղթեր և նյութեր.

3.5. Մոնիթորինգի իրականացման ընթացքում Կազմակերպությունից կարող են պահանջվել գրավոր ու բանավոր պարզաբանումներ և բացատրություններ:

4. Վճարման կարգը և ժամկետները

4.1. Հաշվետու ամսվա ավարտից հետո նախարարության պատասխանատու ստորաբաժանման կողմից տրվում է Միջոցառումների իրականացման վերաբերյալ Եզրակացություն՝ համաձայն N 5 հավելվածի:

4.2. 4.1 կետով սահմանված Եզրակացության դրական գնահատման դեպքում Կազմակերպությունը՝ մինչև հաշվետու ամսվան հաջորդող ամսվա 17-ը, Նախարարություն է ներկայացնում հանձնման-ընդունման ակտի երկուական օրինակ՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մաս կազմող N 4 հավելվածի:

4.3. Կազմակերպությունը՝ հանձնման-ընդունման ակտի հետ միաժամանակ Նախարարություն է ներկայացնում կատարված ծախսերի վերաբերյալ հաշվետվությունները՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասեր կազմող N 3 հավելվածի:

4.4. Նախարարությունը՝ հանձնման-ընդունման ակտը ստանալու օրվանից հետո 3 աշխատանքային օրվա ընթացքում իր կողմից ստորագրված և կնքված հանձնման-ընդունման

ակտի մեկ օրինակը ներկայացնում է Կազմակերպությանը, իսկ չստորագրման դեպքում՝ դրա պատճառաբանված մերժումը.

4.5. Կազմակերպության կողմից իրականացված Միջոցառումների արդյունքը Նախարարության պատասխանատու ստորաբաժանումների կողմից գնահատվում է ՀՀ ԱՍՀՆ 22.06.2016թ. N 69-Ա/1 հրամանի 2.10 կետի, նույն հրամանի N 3 հավելվածով հաստատված եռամսյակային հաշվետվության հիման վրա: Միջոցառումների իրականացման 75% և ավել արդյունքի դեպքում պատասխանատու ստորաբաժանումը տալիս է դրական եզրակացություն՝ համաձայն N 5 հավելվածի: 75% -ից ցածր արդյունքի դեպքում, սույն պայմանագիրը ենթակա է վերանայման:

4.6. ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի N 2060-Ն որոշման 4-րդ կետի 13-րդ ենթակետով պայմանավորված՝ կազմակերպության կողմից պայմանագրով նախատեսված տարեկան աշխատանքների արդյունքում առաջացած տնտեսումները (խնայողությունները) վերադարձվում են Հայաստանի Հանրապետության պետական բյուջե՝ ոչ ուշ, քան մինչև 2026 թվականի հունվարի 24-ը:

5. Պայմանագրի գինը

5.1. Սույն պայմանագրի տարեկան գինը կազմում է 33,858,700 (երեսուներեք միլիոն ութ հարյուր հիսունութ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ: Պայմանագրի գինն իր մեջ ներառում է Կազմակերպության կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ ներառյալ նաև բոլոր հարկերը, տուրքերը ու պարտադիր այլ վճարները.

5.1.1. Պայմանագրի տարեկան գինը կողմերի համաձայնությամբ կվերանայվի լրացուցիչ համաձայնագիր կնքելու միջոցով հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ը ընկած ժամանակահատվածի համար.

5.2. Կազմակերպության հետ պայմանագիր կնքելուց հետո կազմակերպությանը տրամադրվում է կանխավճար՝ պայմանագրի գնի 1/12-րդ չափով, դեկտեմբեր ամսին մարելու պայմանով.

5.3. Պայմանագրի գինը իր մեջ ներառում է հաստատուն ծախսեր.

5.3.1. հաստատուն ծախսերի գծով դրամաշնորհի առավելագույն չափը կազմում է 33,858,700 (երեսուներեք միլիոն ութ հարյուր հիսունութ հազար յոթ հարյուր) ՀՀ դրամ:

5.4. Սույն պայմանագրի գինը կարող է փոփոխվել երկկողմ համաձայնությամբ՝ սույն պայմանագրի 8.3 կետի համաձայն նոր համաձայնագիր կնքելու դեպքում:

5.5. Նախարարությունը՝ Կազմակերպության կողմից իրականացված Միջոցառումների դիմաց փոխհատուցում է անկանխիկ՝ իր գանձապետական հաշվից գումարը Կազմակերպության գանձապետական հաշվին փոխանցելու միջոցով:

Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է սույն պայմանագրին կից N 4 հավելվածով սահմանված «Հանձնման-ընդունման» երկկողմանի ստորագրված ակտի հիման վրա, սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված ֆինանսական միջոցների սահմաններում, բայց ոչ ավելի քան տվյալ ժամանակահատվածի (տարեսկզբից աճողական) համար նախատեսված գումարի չափից: Հաշվետու ժամանակահատվածում փաստացի իրականացված Միջոցառումների դիմաց վճարվելիք գումարի չափը սույն պայմանագրի N 2 հավելվածով նախատեսված գումարի չափը գերազանցելու դեպքում, վճարումն իրականացվում այն եռամսյակում, որում դրամական միջոցները նախատեսված են:

6. Կողմերի պատասխանատվությունը

6.1. Սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման դեպքում Կազմակերպությունը պարտավորվում է Նախարարությանը փոխհատուցել չիրականացված միջոցառման չափով և վճարել տուգանք՝ չիրականացված միջոցառման համար նախատեսված գումարի 1 տոկոսի չափով: Ընդ որում, տուգանքի վճարումը Կազմակերպությանը չի ազատում իր պարտավորությունները կատարելու և խախտումները վերացնելու պարտականությունից: Նախարարությունը սույն կետով նախատեսված գումարները հաշվարկում և հաշվանցում է Կազմակերպությանը վճարվելիք գումարներից:

7. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

7.1. Պայմանագրով նախատեսված պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներն են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարումը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում պայմանագրով նախատեսված պարտավորությունների կատարումը: Եթե անհաղթահարելի ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսվանից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը՝ դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. Եզրափակիչ դրույթներ

8.1. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է 2025թ. հունվարի 1-ից մինչև դեկտեմբերի 31-ն ընկած ժամանակահատվածի համար.

8.2. Սույն պայմանագրից ծագած՝ կողմերի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցմամբ, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց կողմերի գրավոր համաձայնության.

8.3. Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ նոր համաձայնագիր (համաձայնագրեր) կնքելու միջոցով, որը (որոնք) կհանդիսանա (կհանդիսանան) սույն պայմանագրի անբաժանելի մասը (մասերը).

8.4. Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով.

8.5. Սույն պայմանագիրը կազմված է 5 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ և յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Սույն պայմանագրի N 1, 2, 3, 4, 5 հավելվածները բաղկացած են 9 էջից և համարվում են սույն պայմանագրի անբաժանելի մասերը:

9. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

Նախարարություն՝	**Կազմակերպություն՝**
ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն ք. Երևան, Կառավարական տուն-3 ՀՀ ՖՆ կենտրոնական գանձապետարանի գործառնական վարչություն Հ/Հ 900011048304 ՀՎՀՀ 01506515	«Հանրակացարաններ» ՊՈԱԿ ք. Երևան, Մոլդովական 29/1 ՀՀ ՖՆ գանձապետական հաշվի համար Հ/Հ 900018002098 ՀՎՀՀ 00874676
Նախարարության գլխավոր քարտուղար՝ **Ս. Մուրադյան** (ստորագրություն) Կ. Տ.	«Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ի տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար **Ա. Ալեքսանյան** Կ. Տ. (ստորագրություն)

Հավելված N 1
2025 թվականի «Վեցերորդ» « 20 » -ին կնքված
ԴՏՊ – Ծ1011.Մ11008/25 պայմանագրի

ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՆԿԱՐԱԳԻՐ

«Հանրակացարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպությունը (այսուհետ՝ ՊՈԱԿ) իրականացնում է Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապաստան ստացած անձանց՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տրված ուղեգրերի հիման վրա հանրակացարանային սենյակներում բնակեցման, ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի թիվ 1241-Ն որոշման 2-րդ հավելվածում ընդգրկված շենքերի բնակիչների սոցիալական խնդիրների դեպքում խորհրդատվության ապահովման ու նույն շենքերում ընդհանուր օգտագործման տարածքների (այդ թվում՝ նկուղների և տանիքների)՝ պահանջվող սանիտարահիգիենիկ պայմանների և լուսավորության ապահովման, աղբահանության կազմակերպմանն ուղղված սպասարկման աշխատանքները:

ՊՈԱԿ-ը սպասարկում է թվով **4** հանրակացարանային մասնաշենքերում բնակվող **175** փախստական ընտանիք **508** անձով՝ **16** հաստիքային միավորի միջոցով:

NN ը/կ	Իրականացվելիք միջոցառման					
	անվանումը	համառոտ բովանդակությունը	կատարման ենթակա գործառույթների նկարագիրը	ակնկալվող արդյունքները և դրանց գնահատման չափանիշները	վերջնաժամկետը	պահանջվող գումարը(դրամ)
1	ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 27-ի «ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 2060-Ն որոշմամբ նախատեսված բյուջետային ծախսերի գործառնական դասակարգման 10 բաժնի 07 խմբի 01 դասի ««Ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների կենցաղային խնդիրների լուծման միջոցառումների իրականացում» ծրագիր	ՊՈԱԿ-ը պարտավորվում է ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով և դեպքերում ք. Երևան Մոլդովական փողոց 29/1 և Շիրակի փող. 2/32, Կոտայքի մարզի Աբովյան քաղաքի Ուսանողական փող. 4 ճարտարագիտական քոլեջ հանրակացարանի և Արարատի մարզի Դարբնիկ գյուղի Անդրանիկի 4, նախկին գյուղատնտեսական քոլեջ հանրակացարանային մասնաշենքերում ու սոցիալական տներում կատարել հետևյալ աշխատանքները. **Հանրակացարանային մասնաշենքերում ու սոցիական տներում `** 1. բնակվող փախստական և	ՊՈԱԿ-ը 1) կազմակերպում և իրականացնում է բնակվելու իրավունք ունեցող անձանց բնակեցումը հատկացված բնակելի տարածությունում. 2) բնակիչների հետ կնքում է կացարանի տրամադրման պայմանագիր՝ 3) իրականացնում է բազմաբնակարան սոցիալական բնակարանային ֆոնդ հանդիսացող շենքերի պահպանումը, տեխնիկական սպասարկումը. 4) մասնակցում է սոցիալական բնակարանային ֆոնդ հանդիսացող բազմաբնակարան շենքերի և դրանց հարակից տարածքներին առնչվող հարցերի քննարկմանը պետական և տեղական ինքնա-	Սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված են հետևյալ շենքերն ու շինությունները՝ 1. ք. Երևան Մոլդովական փող. 29/1 շենքի 1-ին հարկի մուտքից ձախ հատվածի NN 1, 2, 3, 5, 6, 7, 8, 9, 10, 11, 12 բնակարանները և 3-րդ հարկում գտնվող NN 302, 303, 304, 305, 306, 307, 309, 310, 311, 312, 313, 314 բնակարանները, ընդհանուր բնակարանների թիվը՝ 23, բնակվող փախստականների թիվը՝ **64**; 1.Արարատի մարզ, գյուղ Դարբնիկ, Անդրանիկի փողոց 4 շենք, ընդհանուր բնակարանների թիվը՝ 46, բնակվող փախստականների թիվը՝ **156** Ընդամենը՝ սոցիալական բնակարանային ֆոնդում ներառված կառույցների թիվը 2 է, այդ թվում՝ 2 շենք՝ 69 բնակարանով, բնակվող	01.01.2025թ. 31.12.2025թ.	Սույն պայմանագրով նախատեսած և օրենսդրությամբ չարգելված այլ միջոցների շրջանակներում

		ոչ փախստական (տեղաբնակ) ընտանիքների և բնակիչների հաշվառում. 2. ընդհանուր օգտագործման տարածքների պահպանում. 3. էլեկտրասնուցման ապահովում. 4. կոմունալ սպասարկման ծառայությունների ժամանակին կատարման հսկողություն. 5. սանիտարահիգիենիկ կանոնների պահպանման հսկողություն. 6. ջրամատակարարման և ջրահեռացման /կոյուղի/ համակարգի անխափան գործունեության կազմակերպում. 7 ներքին կարգ ու կանոնի ապահովում. 8 բնակիչներին անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկանքների տրամադրում. 9. ազատ սենյակների առկայության վերաբերյալ գրավոր տեղեկատվության ներկայացնում լիազորված պետական մարմնին՝ Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն 10. երկար ժամանակ չբնակվող կամ անօրինական զբաղեցրած սենյակներն ազատելու նպատակով դատարան համապատասխան հայցադիմումի	կառավարման մարմիններում. 6) բնակիչներին անհրաժեշտության դեպքում տրամադրում է տեղեկանքներ՝ շենքում բնակվելու և նրանց ընտանիքի կազմի մասին. 7) ապահովում է լիազորված անձանց մուտքը շենքի փակ բնակարաններ:	փախստականների թիվը՝ **220** ; Հանրակացարանային մասնաշենքերը որտեղ բնակվում են փախըստականներ ընդհանուր թիվը 3 է, զբաղեցված սենյակների թիվը՝ 369, որից 168 չսեփականաշնորհված բնակմակերեսներով, բնակվող փախստականների թիվը՝ **288** ; ք. Երևան Մոլդովական փող. 29/1 շենք՝ 4-8-րդ հարկեր, ընդհանուր 82 սենյակ (49 չսեփականաշնորհված, բնակվող փախստականների թիվը՝ **53**), Շիրակի փող. 2/32 շենք ընդհանուր 112 սենյակ (45 չսեփականաշնորհված, բնակվող փախստականների թիվը՝ **77**) : Կոտայքի մարզ ք. Աբովյան Ուսանողական 4, ընդհանուր 175 սենյակ (74 չսեփականաշնորհված, բնակվող փախստականների թիվը՝ **158**); ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող սոցիալական բնակարանային և հանրակացարանային սենյակների ֆոնդի կառավարման ողջ գործընթացն իրականացվում է ՊՈԱԿ-ի աշխատակազմի կողմից (16.0 հաստիքային միավոր); ՊՈԱԿ-ի գրասենյակի համակարգչային ցանցի, սոցիալական բնակարանային ֆոնդի տեսահսկման համակարգերի սպասարկումը՝ որոնք հանդիսանում են նաև արտակարգ իրավիճակներում տվյալ տարածքում օգտագործվող խիստ անհրաժեշտ միջոցներ՝ իրականացվում է պարետների կողմից (1-ական հաստիքային միավոր) ք. Երևան Մոլդովական փող. 29/1 և Արարատի մարզ		

		ներկայացում և այդ մասին Հայաստանի Հանրապետության Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն տեղեկացում. 11.անհրաժեշտության դեպքում իրավաբանական անձ հանդիսացող կազմակերպությունների և ֆիզիկական անձանց, ինչպես նաև տեղաբնակ ու իրենց բնակմակերեսները սեփականաշնորհած փախստական ընտանիքների հետ պայմանագրերի կնքում. 12. օրենսդրությամբ նախատեսված այլ գործառույթների իրականացում: ՊՈԱԿ-ի հետ կնքված դրամաշնորհի պայմանագրի նպատակը ՊՈԱԿ-ին՝ որպես սոցիալական բնակարանային ֆոնդ,անհատույց օգտագործման իրավունքով ամրացված շենքերի շինությունների և նույն շենքերում բնակվող փախստական բնակիչների սպասարկման համար անհրաժեշտ ֆինանսավորման ապահովումն է: ՊՈԱԿ-ը սոցիալական տան կացարաններում բնակվելու իրավունք ունեցող անձանց (այսուհետ՝ բնակիչ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կացարանի տրամադրման կազմակերպման, բնակիչների հետ պայմանագրերի		Դարբնիկ գյուղի Անդրանիկի 4 շենքերում; Բոլոր սոցիալական բնակարանային շենքերում ու հանրակացարանային մասնաշենքերում (ընդհանուր թվով 4), կազմակերպչական, վարչական տարածքների մաքրման ու փախստականներով բնակեցված բնակարաներում ու սենյակներում, ընդհանուր օգտագործման տարածքներում առկա խնդիրների առաջացման դեպքում՝ դրանց լուծման աշխատանքներն իրականացվում է պարետի, սանտեխնիկի ու հավաքարարի կողմից (3.0 հաստիքային միավոր, յուրաքանչյուր շենքում), իսկ իրավական, շինվերանորոգման ու այլ հարցերի դեպքում ՊՈԱԿ-ի տնօրենության կողմից: Այսպիսով, ՊՈԱԿ-ում սոցիալական բնակարանային ֆոնդի և հանրակացարանային մասնաշենքերի տեխնիկական սպասարկումն իրականացվում է ընդամենը 16 հաստիքային միավորներով: Գնահատման համար 2023 թվականին սահմանված են հետևյալ որակական ցուցանիշները. 1. ՊՈԱԿ-ին ամրագրված սոցիալական կացարաններում, ք. Երևան Մոլդովական փող 29/1 շենք առաջին և երրորդ հարկեր, Արարատի մարզ Դարբնիկ գյուղ Անդրանիկի 4 հասցեի բնակարանները տրամադրում են բնակչին՝ երեք տարի ժամկետով, որը սեփականաշնորհման ենթակա չէ, իսկ հանրակացարանային շենքե-		

		կնքման, սոցիալական բնակարանային ֆոնդի պահպանման, շահագործման և սպասարկման ապահովման գործընթացն իրականացնում է ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 25-ի N 1241-Ն, որոշման պահանջներին համապատասխան: Սոցիալական բնակարանային ֆոնդի շահառուներ կարող են լինել բնակելի տարածություն ստանալու իրավունք ունեցող՝ սոցիալապես անապահով և փախստականի կարգավիճակ ու ապաստան ստացած օտարերկրյա քաղաքացիները, սեփականության իրավունքով իրենց պատկանող բնակելի տարածություն չունեցող, ինքնասպասարկման ապահովման ունակություն ունեցող, հետևյալ անձինք (խմբերը)՝ 1) Հայաստանի Հանրապետությունում փախստական ճանաչված և ապատան ստացած ու նրա ընտանիքի անդամների ՀՀ տարածքում սեփականության իրավունքով բնակելի տարածություն չունենալը, և դիմում ներկայացնելու ամսվան նախորդող հինգ տարվա ընթացքում բնակելի տարածություն օտարած չլինելը; 2) ընտանիքների անապահովության գնահատման համակարգում հաշվառված, անապահովության 0-ից բարձր միավոր ունեցող անձինք (ընտանիքները)		րում սենյակները հատկացվում են առանց ժամկետի սահմանափակման, որոնք ենթակա են սեփականաշնորհման Հայաստանի Հանրապետությունում գործող համապատասխան իրավական ակտերով: ՊՈԱԿ-ին ամրագրված սոցիալական կացարաններում ու հանրակացարանային մասնաշենքերում փախստականների հատկացման, շահառուների ընտրության, հաշվառման, ուղեգրերի տրամադրման, բնակեցման, սպասարկման, վերահսկման կարգը, որպես իրավական ակտի սահմանված էր նախկինում գործող Հայաստանի Հանրապետության Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների նախարարի 07.04.2022թ. թիվ 13-Լ հրամանով:		

		Երևան քաղաքի Մոլդովական փող. 29/1 շենքի առաջին հարկում գտնվող «Ինտեգրման կենտրոն» սոցիալական տանը տեղավորելու առաջնահերթությունը տրվում է Հայաստանի Հանրապետությունում ապաստան հայցողների ժամանակավոր տեղավորման կենտրոնում բնակվող և փախստականի կարգավիճակ ստացած փախստականներին «Ինտեգրման կենտրոն»-ում ժամանակավոր կացարանները տրամադրվում են շահառուներին մեկ տարի ժամկետով՝ վեց ամիս երկարաձգելու հնարավորությամբ:				

Նախարարություն

ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի Նախարարություն

Գլխավոր քարտուղար՝

Ս. Մուրադյան

(ստորագրություն)

Կ.Տ.

Կազմակերպություն

«Հանրակացարաններ» պետական ոչ առևտրային կազմակերպություն

տնօրենի ժամանակավոր պաշտոնակատար

Ա. Ալեքսանյան

(ստորագրություն)

Կ.S.

Հավելված N2
2025թ.« » « » կնքված
N ԴՏՊ- Ծ1011.Մ11008/25 պայմանագրի

ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի 1011 «Անապահով և կյանքի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն» ծրագրի 11008 «Ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների կենցաղային խնդիրների լուծման միջոցառումների իրականացում» միջոցառման շրջանակներում «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ին դրամաշնորհի տրամադրման համար սահմանվող

1. Կազմակերպությունում ներառված կացարանների թիվը, 4 միավոր
1.1 Կացարաններում ապրող փախստականների թիվ, մարդ 508 մարդ
2. Հասփիքային միավորների թիվը 16 հաստիքային միավոր
3. Հասփափուն ծախսեր. 33,858.7 հազ.դրամ
4. Տրամադրվող դրամաշնորհի առավելագույն չափը 33,858.7 հազ.դրամ

այդ թվում

Հասփափուն ծախսերի գծով

ա/ հասփափուն ծախսերի գծով դրամաշնորհի փրամադրման ժամանակացույց.

Ամիսները	Ընդամենը	Ամիսները	Ընդամենը
հունվար	2,821.6	հուլիս	19,751.2
փետրվար	5,643.2	օգոստոս	22,572.8
մարտ	8,464.8	սեպտեմբեր	25,394.4
ապրիլ	11,286.4	հոկտեմբեր	28,216.0
մայիս	14,108.0	նոյեմբեր	31,037.1
հունիս	16,929.6	դեկտեմբեր	33,858.7
Ընդամենը			***33,858.7***

բ/ հասփափուն ծախսերի սահմանային չափաքանակները ՚ըսփ ծախսերի փնփեսագիփական ծածկագրի.

Տնտեսագիտական դասակարգման կատեգորիաների անվանումը	Ծածկագիրը	Տարեկան չափաքանակը (հազ.դրամ)
Աշխատանքի վարձատրություն	410000	27,907.2
Ծառայությունների և ապրանքների ձեռքբերում	420000	5,951.5
Ընդամենը		***33,858.7***

Նախարարություն
Նախարարության գլխավոր քարտուղար
Ս.Մուրադյան
(ստորագրություն)
Կ.Տ

Կազմակերպություն
Տնօրենի ժ/պ
Ա. Ալեքսանյան
(ստորագրություն)
Կ.Տ

Հավելված N 5
2025թ. « » « » կնքված
N ԴՏՊ – Ծ1011.Մ11008/25 պայմանագրի

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԿԱՏԱՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Պայմանագրի անվանումը

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 2025թ.
Պայմանագրի համարը՝
Պատվիրատուի անվանումը՝
Կատարողի անվանումը՝

Վերոհիշյալ պայմանագրի շրջանակներում Կատարողը « » « » 2025-ից « » « » 2025թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ ծառայությունները

N	ՄԱՏՈՒՑՎԱԾ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ					
	Անվանումը	Տեխնիկական բնութագրերի համառոտ շարադրանքը	Քանակական բնութագիրը		Կատարման ժամկետը	
			Ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	Փաստացի	Ըստ պայմանագրով հաստատված ժամանակացույցի	Փաստացի
1.	Ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների կենցաղային խնդիրների լուծման միջոցառումների իրականացում	Սոցիալական տան կացարաններում բնակվելու իրավունք ունեցող անձանց ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով կացարանի տրամադրման կազմակերպման, բնակիչների հետ պայմանագրերի կնքման, սոցիալական բնակարանային ֆոնդի պահպանման, շահագործման և սպասարկման ապահովման գործընթացի, այդ շենքերում բնակվելու իրավունք ունեցող բնակիչների խնդիրների (իրավունքների և օրինական շահերի պաշտպանության և այլ սոցիալական խնդիրների) լուծման, աջակցման, կազմակերպման աշխատանք-ների իրականացում				

Նշումներ անհամապատասխանությունների մասին՝

Հիմք ընդունելով վերոգրյալը, տալիս եմ _____ եզրակացություն:
(Դրական/բացասական)

_____
պատասխանատու ստորաբաժանման ղեկավար

« » « » 2025թ.

Հավելված N 4
2025թ. « » « » կնքված
N ԴՏՊ – Ծ1011.Մ11008/25 պայմանագրի

Նախարարություն՝	Կազմակերպություն՝
հասցե՝	հասցե՝
հ/հ	հ/հ
հվհհ	հվհհ

ԱԿՏ
Հանձնման-ընդունման

« »« » 2025թ.
Պայմանագրի անվանումը՝
Պայմանագրի կնքման ամսաթիվը՝
Պայմանագրի համարը՝
Նախարարությունը, ի դեմս նախարարության գլխավոր քարտուղար՝ , և Կազմակերպությունն՝ ի դեմս Կազմակերպության տնօրեն , հիմք ընդունելով վերոհիշյալ պայմանագրով նախատեսված Միջոցառումների իրականացման վերաբերյալ, պատասխանատու ստորաբաժանման « »« » 2025թ. N __ եզրակացությունը, այն մասին, որ պայմանագրով նախատեսված՝ ստորև նշված Միջոցառումների իրականացումը համապատասխանում է պայմանագրով նախատեսված Միջոցառումներին և տրամադրման ժամանակացույցին՝ կազմեցին սույն ակտը հետևյալի մասին.
Պայմանագրի շրջանակներում Կազմակերպությունը « »« » 2025թ–ից « »« » 2025թ. ընկած ժամանակահատվածում իրականացրել է հետևյալ Միջոցառումները.

Համառոտ նկարագիրը	*Քանակը*	*Նվազագույն շահավետ գինը՝մեկ միավորի հաշվարկով (դրամ)*	*Մեկ միավորի գինը (դրամ)*	*Մեկ միավորի համար տրամադրվող դրամաշնորհի չափը (դրամ)*	*Վճարման ենթակա գումարը (հազ.դրամ)*	*Վճարման վերջնաժամկետը ամիս, ամսաթիվը*
1	2	3	4	5=3-4	6=2x.5	7
Փախստականներով և ոչ փախստականներով (տեղաբնակ) բնակեցված կացարաններում սպասարկման աշխատանքների իրականացումը	x	x	x	x	x	x
Ընդամենը	x	x	x	x		x

հանձնեց՝	ընդունեց՝
/ստորագրություն/ / անուն.ազգանուն/	/ստորագրություն/ / անուն.ազգանուն/
Կ.Տ	Կ.Տ

Հավելված N 3

2025թ.« » « » կնքված

N ԴՏՊ- Ծ1011.Մ11008/25

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ

ՀՀ 2025 թվականի պետական բյուջեի 1011 «Անապահով և կանչի դժվարին իրավիճակում սոցիալական խմբերին աջակցություն» ծրագրի 11008 «Ժամանակավոր կացարաններում բնակվող փախստականների կենցաղային խնդիրների լուծման միջոցառումների իրականացում» միջոցառման շրջանակներում «Հանրակացարաններ» ՊՈԱԿ-ին _____ հաստատուն ծախսերի գծով փոխհատուցման ենթակա գումարի վերաբերյալ

հազ.դրամ

Ծախսային հոդվածներ					Հաշվետու ժամանակահատվածում			Տարեսկզբից աճողական			
Տնտեսագիտական դասակարգման ծածկագիրը			Հաստատված նախահաշվի գումարը	Ճշտված նախահաշվի գումարը	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Բարեգործական և այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	Նախատեսված գումարը	Պետական բյուջեից փոխհատուցման ենթակա գումարը	Բարեգործական և այլ միջոցներից կատարված դրամական ծախսեր	բարեգործական կազմակերպության անվանումը
Տնտեսագիտական դասակարգման սինթետիկ հաշիվների անվանումը	Տնտեսագիտական դասակարգման անալիտիկ հաշիվների անվանումը	ծածկագիրը									
1	2	3	4	5	6	7	8	9	10	11	12
ԸՆԴԱՄԵՆԸ ԾԱԽՍԵՐ՝		x	34,767.6	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
Հաստատուն ծախս			34,767.6	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
-Աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ		4111000	27,907.2	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Մշտական աշխատողների աշխատավարձեր և հավելավճարներ	411110	27,907.2								
Էներգետիկ ծառայություններ		421200	2,400.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Էներգետիկ ծառայություններ	421210	2,400.0								
	Ջեռուցման ծառայություններ	421220									
Կոմունալ ծառայություններ		421300	423.4	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Ջրամատակարարման և ջրահեռացման ծառայություններ	421310	423.4								
	Այլ կոմունալ ծառայություններ	421390									
Կապի ծառայություններ		421400	571.2	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	կապի արտաքին ծառայություններ	421410	259.2								
	փոստային խոսակցությունների վճար		30.0								
	միջքաղաքային խոսակցության գումար		66.0								
	ինտերնետային կապ		216.0								
Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ		423900	162.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Ընդհանուր բնույթի այլ ծառայություններ	423910	162.0								
Մասնագիտական ծառայություններ		424100	733.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Մասնագիտական ծառայություններ	424110	733.0								
Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում		425100	1,679.6	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Շենքերի և կառույցների ընթացիկ նորոգում և պահպանում	425110	1,679.6								
Մեքենաների և սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում		425200	550.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Տրանսպորտային սարքավորումների ընթացիկ նորոգում և պահպանում	425210									
	Գրասենյակային սարքերի և սարքավորումների ընթացիկ նորոգում և	425220	550.0								
	Այլ մեքենաների և սարքավորումների	425290									
Գրասենյակային նյութեր և հագուստ		426100	202.2	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	0.0	
	Գրասենյակային պիտույքներ	426110	202.2								
Հատուկ նպատակային այլ նյութեր	Հատուկ նպատակային այլ նյութեր	426900	139.0								

Տնօրեն՝ _____ (ստորագրություն)

Գլխավոր հաշվապահ՝ _____ (ստորագրություն)

Կ.Տ